ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2017թ. նոյեմբերի 1 **N 195 -Ա**

ԱՇՏԱՐԱԿԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2002 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ''Զինապարտության մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 7-րդ հոդվածների պահանջները Աշտարակի զորակոչային տեղամասում 2002 թվականին ծնված պատանիների կցագրումն անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Կցագրման ենթակա պատանիների բժշկական զննումն անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. 2018 թվականի փետրվար-դեկտեմբեր ամիսներին Աշտարակի զինկոմիսարիատում անցկացնել 2002 թվականին ծնված պատանիների կցագրումը (անհրաժեշտության դեպքում նաև արտագնա).

1) տարածքի բնակավայրերում բնակվող 2002 թվականին ծնված պատանիներին ամբողջությամբ ընդգրկել <<Ձև 2>> ցուցակներում և մանրակրկիտ ստուգելուց հետո կազմել կցագրման ենթակա 2002 թվականին ծնված պատանիների <<Ձև 3>> ամփոփացուցակը,

2) կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների ցուցակը ներկայացնել <<Աշտարակի բժշկական կենտրոն>> ՓԲԸ գործադիր տնօրենին նրանց հետագա բուժումը կազմակերպելու համար:

3. <<Աշտարակի բժշկական կենտրոն>> ՓԲԸ գործադիր տնօրենին՝

1) բժշկական հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ բժշկական պարագաներով և դեղամիջոցներով,

2) նախապատրաստել և ժամանակին զինկոմիսարիատ ներկայացնել 2002 թվականին ծնված պատանիների <<Ձև 25>> ամբուլատոր քարտերը՝ ներդիր թերթիկների հետ,

3) արդյունավետ կազմակերպել կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների բուժումը և արդյունքների մասին տեղեկացնել հանձնաժողովի նախագահին:

4. Առաջարկել Աշտարակի տարածաշրջանի համայնքների ղեկավարներին, ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

1) Աշտարակի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել 2002 թվականին ծնված պատանիներից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ապահովել կցագրումից դուրս մնացած պատանիների ներկայանալը,

2)ձեռնարկել անհրաժեշտ աջակցություն, որպեսզի զինակոչիկները ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ, անհրաժեշտության դեպքում տրամադրել փոխադրամիջոց:

5.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

1) դիսպանսեր հսկողության տակ գտնվող 2002 թվականին ծնված պատանիների ամբուլատոր քարտերը և ցուցակները ներկայացնել Աշտարակի զինկոմիսարիատ:

6.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետին՝

1) Աշտարակի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Աշտարակի սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից հաշվառված 2002 թվականին ծնված հաշմանդամ պատանիների ցուցակները:

7. Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնի պետին՝

1) տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Աշտարակի բաժնի կողմից քրեական պատասխանատվությամբ նախաքննության մեջ գտնվող պատանիների ցուցակները,

2) խիստ հսկողություն սահմանել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության Աշտարակի անձնագրային բաժնի աշխատանքների նկատմամբ, բացառել զորակոչիկին գրանցելը և գրանցումից հանելը՝ առանց զինվորական հաշվառման կանգնելու և հաշվառումից դուրս գալու:

8. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Աշտարակի զինվորական կոմիսար՝ գնդապետ Մ.Ղազարյանի վրա:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017թ. նոյեմբերի 1 -ի N 195 -Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի կցագրման բժշկական հանձնաժողովի

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ	- Աշտարակի տարածքային զինվորական կոմիսար, գնդապետ, հանձնաժողովի նախագահ
Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	- թերապևտ, ավագ բժիշկ
Ն.ՄԱՆՎԵԼՅԱՆ	- մաշկավեներոլոգ
Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ	- վիրաբույժ
Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	- նյարդաբան
Ս.ՄԻՐԶՈՅԱՆ	- ակնաբույժ
Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ	- քիթ-կոկորդ–ականջ
Ա.ՃԱՆՃԱՊԱՆՅԱՆ	- սրտաբան
Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	- հոգեբույժ
Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆ	- բուժքույր

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ